Գ. Վ. ՆՈՎԻԿՈՎ.

ՆԱՍԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Նասերիզմի գաղափարախոսությունը արտահայտում է Եգիպտոսի պատմության մոտ քսանամյա փուլի համար բնորոշ՝ հավասարակշռված քաղաքականություն վարելու և միջին ուղուն հետևելու ձգտումը։ Նասերիզմի գաղափարախոսության ձևավորումը նման էր «ճոճանակի երերմանը, որի ձախ ճոճման լայնությունն անմիջապես հետևում էր աջ լայնություն»[1]։

Նասերն անցել է բարդ և հակասական ուղի՝ պրեզիդենտական աթոռն զբաղեցրած փոխգնդապետից մինչև համաշխարհային մասշտաբի քաղաքական գործիչ, որը հաղթահարելով իր դասակարգային և դասային սահմանափակվածությունը կարողացավ հասնել մինչև իմպերիալիզմի ու սեփական խոշոր ու մասամբ նաև միջին բուրժուազիայի դեմ պայքարելու անհրաժեշտության և անխուսափելիության ըմբռնմանը։

Նասերի տեսական պրպտումները հիմնականում պայմանավորվում էին երկրում և դրանից դուրս ստեղծված կոնկրետ իրավիճակով։ Մինչև «Ազատ սպաներ» կազմակերպության ստեղծումը նրա քաղաքական հայացքները հաճախ համընկնում էին «մուսուլման եղբայրների» հայացքների հետ, բարձրանում մինչև ձախ խմբերի քաղաքական ծրագրերն հասկանալու փորձերը, սակայն, նա երբեք չհարեց նախահեղափոխական Եգիպտոսում գոյություն ունեցող որևէ քաղաքական հոսանքի։

Գաղափարախոսության նկատմամբ նվազագույն և ինչ-որ չափով ստիպողական հետաքրքրությունը պայմանավորեց Նասերի քաղաքական աշխարհայացքի ուշացած ձևավորումը։ Ինչպես նկատել է Ռ. Բեյկերը, «Եգիպտական հեղափոխությունն ավելի շուտ մշուշոտ նացիոնալիզմի վրա էր խարսխված, քան հետևողական գաղափարախոսության»[2]։

Նասերի գաղափարախոսության որակական թռիչքների, տնտեսական և քաղաքական կյանքի կոնկրետ փոփոխություններին նրա գաղափարախոսության հարմարվելու մասին է վկայում այն հանգամանքը, որ Նասերի 18 տարի իշխանության գլուխ գտնվելու ընթացքում (հաշված նաև իշխանության ամրապնդման համար նրա մղած պայքարի տարիները) Եգիպտոսում ստեղծվեցին երեք քաղաքական կազմակերպություններ, հաստատվեցին վեց սահմանադրություններ, հինգ անգամ համարյա ամբողջությամբ փոխվեց Դաեֆլիճների կազմը և երեք անգամ՝ 1955, 1962 և 1968 թթ. ընդունվեցին վարչակարգի գործունեության ծրագրեր։ Հետևաբար, խոսել Նասերի գաղափարախոսության մասին երկրի կոնկրետ իրադրությունից կտրված, արմատապես սխալ է։

Նասերի գաղափարախոսությունը բաղկացած էր մի քանի տարրերից, որոնցից կարևորագույնները կապված էին եգիպտական իրականությունում երկու տասնամյակների ընթացքում տեղի ունեցած ներքին պրոցեսների աստիճանական իմաստավորման, իսլամական գործոնի և նացիոնալիզմի հետ։ Ոչ պակաս կարևոր դեր էր կատարում նաև Եգիպտոսի նկատմամբ արևմտյան երկրների դիրքորոշումը։ Մեզ համար առավել հետաքրքրություն ներկայացնում է Նասերի փիլիսոփայության առաջին բաղկացուցիչ տարրը։

Հեղափոխության առաջին փուլի տեսաբաններից Իհսան Աբդալ Կադդուսը գրել է. «Բանն այն է, որ տվյալ փուլում հեղափոխությունը կարիք ունի ավելի շուտ պրակտիկ գործերի, քան տեսական դատողությունների կամ վերլուծությունների»[3]։ Այսպիսի պարզունակ մոտեցման հետ համաձայնվել չի կարելի, քանի որ գաղափարական համապատասխան հենակետի ստեղծման անհրաժեշտությունն ակնհայտ էր, քանի որ ընդհուպ մինչև 60-ական թթ. սկիզբը Նասերի փիլիսոփայության անկյունաքարը դասակարգերի և դասակարգային պայքարի գոյության մարքսիստական ըմբռնման ամբողջական մերժումն էր։ Հեղափոխության երկրորդ տարեդարձի տոնակատարության ժամանակ, 1954 թ. հուլիսի 23-ին, Նասերը հետևյալն հայտարարեց. «Ըստ էության, մեր պետությունը ամբողջ ժողովրդի պետություն է և արտահայտում է բոլոր դասակարգերի շահերը։ Այն բանվորների և գյուղացիների, ծառայողների և ուսանողների, կապիտալ ունեցողների և մտավորականների պետություն է, աղքատների և չունևորների, ուժեղների և հարուստների պետություն։ Մեր պետությունը ամբողջ ազգին է ծառայում»[4]։

Չնայած վերևում բերված մեջբերումում Նասերը թվում է մի քանի դասակարգեր և դասեր, չպետք է մոռանալ, որ մինչև 1960—1961 թթ.

այդ ասելով ուղղակիորեն հասկացվում էր «հարուստներ» և «աղքատներ»։ Ավելի ուշ ի հայտ եկան «շահագործողներ» և «շահագործվողներ» հասկացությունները։

Այս փուլի Նասերի փիլիսոփայության ոչ պակաս կարևոր գործոնը պրոլետարիատի դիկտատուրայի խնդրի նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքն էր, որը մինչև վերջ անփոփոխ մնաց։ Ըստ Նասերի եգիպտական հեղափոխությունը պետք է լիներ հենց «համազգային հեղափոխություն», որը ազգային-ազատագրական հեղափոխություն լինելով առավել ընդունելի էր, և, հետևաբար, գաղափարական նվաղագույն հիմք պետք է դառնար ազգային միասնությանը։ Ընդհուպ մինչև 1960 թ. համագործակցելով եգիպտական բուրժուազիայի բոլոր խավերի հետ, երկրի տնտեսությունում բացառիկ իրավունքներ տալով նրան, վարչակարգը պետք է պաշտպաներ նրան նաև քաղաքական մարզում, շարունակելով ժրաջանությամբ քարոզել դասակարգային հաշտության տեսությունը. «Մենք ցանկանում ենք անցում կատարել հետադիմական դիկտատուրայից դեպի ամբողջ ժողովրդի դեմոկրատիա..., մենք մեր երկրում ցանկանում ենք հասարակական հակասությունները լուծել խաղաղ ճանապարհով»[5]։ Այսպիսի գաղափարական կեցվածքը նաև հետևանք էր հեղափոխությունից առաջ և նրա առաջին տարիներին կուռ քաղաքական ծրագրի բացակայության, ինչպես նաև Եգիպտոսում գոյություն ունեցող որևէ քաղաքական հոսանքի ենթարկվելու եգիպտական ղեկավարության չկամության։ Սակայն, 60-ական թթ. սկզբին եգիպտական հասարակարգի «վերդասակարգայնության» տեսությունը անհաջողություն կրեց։ «Մենք սխալ գործեցինք, հաշտություն կնքելով հետադիմական տարրերի հետ։ Մենք կարծում էինք, որ ինչքան էլ մեծ լինեն մեր հակասությունները, նրանք այնուամենայնիվ մեր ժողովրդի զավակներն են, և որ մենք մեկ բախտի տեր ենք։ Բայց փորձը ցույց տվեց, որ այդպես մտածելով մենք սխալվել ենք։ Փորձը ցույց տվեց, որ հետադիմությունը, լինելով իմպերիալիզմի հենարաններից մեկը, չի խորշում իր հերթին հենվել նրա վրա, որպեսզի խլի ժողովրդից նրա սոցիալական նվաճումները։ Փորձը ցույց տվեց, որ հետադիմությունը պատրաստ է դաշինքի մեջ մտնել իմպերիալիզմի հետ իր կորցրած դիրքերը վերականգնելու համար...։ Հետադիմությունը չարաշահեց ժողովրդական զանգվածների բարությունը, համբերությունը և բարեկեցությունը...։

Դրա համար էլ ես հեղափոխությունը շարունակելուց, նրա դրոշը ավելի բարձրացնելուց բացի, ուրիշ ելք չեմ տեսնում...։ Այժմ մենք պետք է ամբողջապես վերագնահատենք մեր հասարակարգի իդեալներն ու բարքերը նոր, ավելի խորը հիմքերի վրա»[6]։

Ստեղծված իրավիճակում Նասերին անհրաժեշտ էր նոր սոցիալական հենարան գտնել՝ հեղափոխության խորացող ընթացքի համար։ Այդպիսի հենարան կարող էին դառնալ եգիպտական հասարակարգի այն բոլոր դասակարգերն ու խավերը, որոնք շահագրգռված էին արմատական փոփոխություններով։ Հենց այդ փուլում է շրջանառության մեջ մտցվում «աշխատավոր ժողովրդի զավակներ» տերմինը, որը հավաքական անուն էր նշելու համար «գյուղացիներին, բանվորներին, զինվորներին, մտավորականությանը և ազգային կապիտալին»[7]։ Նասերն ավելի է հեռու գնում։ Խարտիայի մասին զեկուցումում նա փորձում է որոշել եգիպտացիների՝ հասարակության այս կամ այն դասակարգին կամ խավին պատկանելու սահմանները. «Բանվոր է նա, ով ստանում է աշխատավարձ և արհմիության անդամ է։ Գյուղացի է նա, ով իր ընտանիքի բոլոր անդամների հետ տիրում է ոչ ավելի, քան 25 ֆեդդան հողակտորի, ապրում է իր հողակտորում և որի համար հողագործությունը գոյության հիմնական միջոց է։ Մտավորականներ են բոլոր նրանք, ովքեր գյուղատնտեսական աշխատողների մեջ չեն մրտնում, չեն աշխատում արտադրությունում, մանր արտադրողներ և զինված ուժերի ներկայացուցիչ չեն»[8]։ Այս սահմանումները վկայում են իր հասարակարգի դասակարգային կառուցվածքի գնահատման խընդրում դասակարգային մոտեցում ի հայտ բերելու Նասերի ձգտման մասին։ Արձանագրելով, որ «նոր սահմանադրությունը պետք է բանվորներին և գյուղացիներին տրամագրի ժողովրդական և քաղաքական կազմակերպությունների բոլոր մակարդակների տեղերի կեսը»[9], եգիպտական հեղափոխության տեսությունը նոր որակական թռիչք գործեց։ Այդ ժամանակ արդեն Նասերը մոտ էր սոցիալիզմի գիտական ըմբռնմանը։ Ի միջի այլոց, ինքը՝ պրեզիդենտը, երբեք չի նույնացրել իր աշխարհայացքը մարքսիզմի հետ. «մարքսիզմն ունի իր փիլիսոփայությունը, և նրա հետ հաշվի չնստել չի կարելի, բայց մարքսիզմը չի ընդունում կրոնը։ Այստեղ ես սկզբունքորեն նրա հետ համաձայն չեմ։ Նա ընդունում է պրոլետարիատի դիկտատուրան, խոսում մի դասակարգի մյուսի նկատմամբ բռնություն գործադրելու մասին։ Այս հարցերում մենք տարբեր կարծիքներ ունենք։ Հետևաբար, մեր սոցիա-

լիզմը մի բան է, իսկ կոմունիզմը՝ այլ բան»[10]։ Իսկ Գիզայում Արաբական սոցիալիստական միության անդամների խորհրդակցությունում, 1966 թ. գարնանը Նասերն հայտարարեց. «Եթե մարքսիզմը պայմանականորեն ձևակերպենք 20 կետերով, ապա դրանցից տասնութի տակ ես պատրաստ եմ ստորագրել։ Միայն երկու կետ են մեզ տարանջատում մարքսիստներից. այն է՝ պրոլետարիատի դիկտատուրան և վերաբերմունքը կրոնի նկատմամբ»[11]։

Նասերը բազմիցս հայտարարել է, որ իր ուղին հեղափոխության ուղին է, որի վերջնական նպատակն է սոցիալիզմի եգիպտական մոդելի կառուցումը։ 1956 թ. Նասերն առաջին անգամ փորձեց եգիպտական հասարակությունը ներկայացնել եռամիասնական բանաձևով՝ «սոցիալիստական, կոոպերատիվ, դեմոկրատական»։ Նա պնդում էր, որ կոոպերատիվ, սոցիալիստական, դեմոկրատական է այն հասարակությունը, որում բարձրանում է կենսամակարդակը, կա սոցիալական արդարություն, վերացված են ֆեոդալիզմն ու շահագործումը, կապիտալի տիրապետությունը, հնարավորություններ են որոնվում երկրի յուրաքանչյուր բնակչի համար։ Չկան այլևս տերեր ու ստրուկներ։ «Մենք բոլորս քաղաքացիներ ենք մի հանրապետության։ Մենք հավասար ենք, ունենք սեփական արժանապատվության զգացում»[12]։ 1961 թ. հոկտեմբերի 16-ին ժողովրդին ուղղված ուղերձում պրեզիդենտը նկատեց. «Սոցիալիզմի ամենապարզ և ակնառու սահմանումն այն է, որ սոցիալիզմի ժամանակ ազգային եկամուտը բոլոր քաղաքացիների ընդհանուր սեփականությունն է։ Բայց առանց ազգային եկամտի օբյեկտիվ և արդարացի բաշխման, այն (սոցիալիզմը—Գ. Ն.) չի լինի բոլոր քաղաքացիների սեփականությունը»[13]։ Նույն ուղերձում Նասերն հետևյալը հայտարարեց. «Մենք այժմ կարիք չունենք նոր սոցիալիստական օրենքների, որոնք կհամալրեն արդեն մեր ունեցած սոցիալիստական օրենքները»։ Եգիպտական հեղափոխության հիմնադրույթը, որը կանխորոշում էր նրա առանձնահատուկ դիծը, մասնավոր սեփականության անձեռնմխելիության ընդունումն էր («մենք հավատում ենք չշահագործող սեփականության գոյությանը շահագործող սեփականության հետ միասին») և հողի ազգայնացման անհրաժեշտության ժխտումը («մենք հավատում ենք անձնական սեփականությանը՝ հողի մասնավոր սեփականությանը»)[14]։

Նասերը լավ հասկանում էր, որ սոցիալիզմի կառուցումը վայրկենական գործ չէ։ Ելույթ ունենալով Ազգային ժողովի 11-րդ նստա-

շրջանում, 1964 թ. նոյեմբերին նա ասաց. «Մենք առայժմ հեռու ենք սոցիալիստական պետություն լինելուց, մենք գտնվում ենք կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու անցումային շրջանում, քանի որ սոցիալիզմը չի նշանակում միայն մի քանի գործարանների ազգայնացում։ Մեր անցումային շրջանի սոցիալիզմը դեռ չի ձերբազատվել ֆեոդալիզմի մնացուկների, կապիտալիզմի և բյուրոկրատիզմի ազդեցությունից...։ Անցումը սոցիալիզմին՝ աշխատավոր ժողովրդի դեմոկրատական արդարացի հասարակարգին, կարող է իրագործվել միայն սոցիալիզմի ուժերի աճի ուղիով։ Սոցիալիզմը ժողովրդի իշխանություն է»[15]։

Իր ճառերում եգիպտական հեղափոխության առաջնորդը պնդում էր, որ Եգիպտոսում կառուցվող սոցիալիզմը ամբողջապես համապատասխանում էր երկրի զարգացման պայմաններին և որ երկրում կառուցվող դեմոկրատական, կոոպերատիվ, սոցիալիստական հասարակարգը «ազատված կլինի տնտեսական, քաղաքական և սոցիալական շահագործումից»[16]։

Եգիպտական հասարակության առաջընթաց շարժումն իմաստավորելու փորձերը դրսևորվեցին նաև դեմոկրատիայի հարցում։ 1959 թ. «Մեր սոցիալական հեղափոխությունը» գրքույկում Նասերը գրում էր. «Մեզանում կային կուսակցություններ և կար արևմտյան դեմոկրատիայի մոդել, որին կուրորեն հետևում էին։ Դեմոկրատիա այսուհետ չի նշանակում խոսքեր և կուսակցություններ։ Իսկական դեմոկրատիան այն է, որում անհատն ազատ կլինի, հասարակությունը նույնպես ազատ կլինի, և կկառուցվի առողջ հիմքերի վրա։ Այդպիսի դեմոկրատիան ստեղծվում է սոցիալիստական, կոոպերատիվ հասարակություն կառուցելու ճանապարհով, որի ստեղծումից հետո չի մնա այնպիսի մարդ, որը կվաճառահանի երկիրը կամ կտիրապետի նրան»[17]։

Դեմոկրատիայի հարցերին է նվիրված Ազգային գործողությունների խարտիայի հինգերորդ գլուխը։ Այնտեղ արձանագրված է հետևյալը. «Դեմոկրատիան քաղաքական ազատություն է...»։ Քաղաքական դեմոկրատիան չի կարող անջատվել սոցիալական դեմոկրատիայից, քաղաքական դեմոկրատիան չի կարող իրագործվել որևէ դասակարգի միանձնյա տիրապետության պայմաններում։ Դեմոկրատիան ամբողջ ժողովրդի իշխանությունն է և նրա գերիշխանությունը»[18] և այլն։ Նասերը շատ էր սիրում «առողջ դեմոկրատիա» արտահայտությունը, բայց գերադասում էր չվերծանել այն։

Այսպես էր իրավիճակը թղթի վրա։ Իրականում ակնհայտ էր տիրապետող վարչակարգի խոսքերի և գործերի միջև եղած տարբերությունը, որում, անկասկած, արտահայտվում էր եգիպտական ղեկավարության մանրբուրժուական բնույթը։

Հենց ղեկավարության դասակարգային սահմանափակվածությունը, նրա վախը ժողովրդական զանգվածներից գործնականորեն ի չիք դարձրին եգիպտական ժողովրդի մասնակցությունը հեղափոխությանը, չնայած հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական հեղափոխության խնդիրները լուծելիս «նրանք («Ազատ սպաները»—Գ. Ն.) կարող էին աջակցություն գտնել առաջադիմական և դեմոկրատական լայն շրջանակներում։ Բայց նրանք այդ չարեցին մի շարք սուբյեկտիվ (ճշտորոշ գաղափարախոսություն, բավականաչափ քաղաքական փորձի բացակայություն), ինչպես նաև օբյեկտիվ (առաջադիմական կազմակերպությունների տարանջատվածություն, որը և նրանց միջև առաջացրել էր մրցակցական ոգի) պատճառներով»[19]։ Դեռ ավելին, երկրի ղեկավարությունը ոչ մի կերպ չէր ցանկանում թույլ տալ ժողովրդական զանգվածների մասնակցությունը պետության կառավարմանը և միայն ճակատագրական, ճգնաժամային իրադրություններում էր Նասերը դիմում ժողովրդին։ Եգիպտական ժողովուրդը շատ հազվադեպ էր նախաձեռնություն դրսևորում և դուրս գալիս երկրի քաղաքական թատերաբեմ։ Այդ բանն ունի մի քանի պատճառ։ Առաջին հերթին պրեզիդենտ Նասերի անձը. «Նասերը օրենքի աղբյուր էր և հնարավորության սահմաններում օգտագործում էր առաջնորդի ժողովրդականությունը՝ ազգային միասնությունը առերևույթ պահպանելու համար։ Դրա համար էլ նա ժողովրդին համախմբում էր միայն իր անձով և հասարակության բոլոր մնացած ընտրախավերին դեն նետելով, թույլ չէր տալիս միջանկյալ հաստատություններին կանգնել իր սեփական պետական իշխանության և զանգվածների միջև։ Պատասխանատվությունն իր վրա վերցնելն հանգեցրեց ժողովրդի մեծամասնության անպատասխանատվությանը»[20]։ Երկրորդ, ժողովրդի պասիվ աջակցությունը ապահովվում էր կոնկրետ միջոցներով, այն է՝ ինքնակալության տապալումը, անգլիացիների վտարումը երկրից, հողային բարեփոխումները, ազգայնացումները և այլն։ Բացի այդ, ինչպես ճշտորեն նշել է Լ. Բինդերը, «Կառավարությունն ու ժողովուրդը նույնացվում էին ոչ միայն ձևական դեմոկրատական իմաստով, այլ նաև թույլատրելի քաղաքական դիրքերի սահմաններում և դափնեպսակները բաժանե-

լիս»[21]։ Իր դերն ունեցավ նաև վարչակարգի կողմից ուղղված կազմակերպված ընդդիմության խստորեն ճնշումը, ինչը բավականին ակնառու ցույց տվեց իշխանության ամրապնդման պայքարի փուլը (1952—1954 թթ.)։ Եվ վերջապես պակաս կարևոր չէր նաև Նասերի թերահավատորեն տրամադրված լինելն իր ժողովրդի հանդեպ։ «Հեղափոխության փիլիսոփայություն» աշխատությունում Նասերը գրել է. «Մեր ուղին քաղաքական և տնտեսական ազատությունն է, և մեր դերը նրանում խնամակալի դեր է։ Մեր ժողովուրդն այժմ նման է քարավանի, որը փորձում է ընթանալ կենտրոնական ճանապարհով, բայց նա բազմաթիվ հարվածներ է կրում...։ Դրանից քարավանը կարող է կազմալուծվել։ Խմբերը կարող են մոլորվել։ Մեր դերն այն է, որ հավաքենք ցրված մասերը, օգնենք նրանց գտնելու ճիշտ ճանապարհը»[22]։ Տասներկու տարի անց այս վերաբերմունքը ոչ մի փոփոխություն չկրեց. «մեզ վրա է ընկած ժողովրդին դաստիարակելու պարտականությունը»[23]։

Ակամայից հարց է ծագում, արդյո՞ք Նասերը դիկտատոր չէր։ Եգիպտացի հայտնի հրապարակախոս Մուհամմեդ Հասանեյն Հեյքալը այս հարցին բացասական պատասխան է տվել, պնդելով, որ Նասերը ժողովրդի ցանկությունն էր կատարում, երբ ոչնչացրեց միապետությունը, ազգայնացրեց Սուեզի ջրանցքի ընկերությունը և այլն։ Հեյքալն ընդունում էր, որ «Այդ փուլում (50-ական թվականների վերջ 60-ական թվականների սկիզբ) հասարակական քաղաքականության ստեղծման գործում ժողովուրդը չէր մասնակցում, և Եգիպտոսը Նասերի ժամանակ դեմոկրատիա էր ըստ համաձայնության և ոչ թե ըստ մասնակցության»[24]։ Շատ անհամոզիչ է հնչում, քանի որ վերևից որոշված հեղափոխությունը, դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում, երկրի կառավարման մեջ պահպանեց դեկրետիվ բնույթ, հենց դրա համար էլ Նասերյան փուլի Եգիպտոսի պատմության արևմտյան հետազոտողների բացարձակ մեծամասնությունը, ինչպես նաև մի շարք արաբ հեղինակներ այն եզրակացությանն են հանգում, որ Նասերը դիկտատոր էր։ Ավելի ուշ՝ 1983 թ., այս եզրահանգմանն է եկել նաև Հեյքալը, գրելով, որ «Մենք ամբողջովին գտնվում ենք մեկ և միակ իշխանության շրջանակներում։ Սա է դեմոկրատիայի պրոբլեմը Եգիպտոսում։ Դեմոկրատիայի պրոբլեմը Եգիպտոսում ավելին էր, քան դեմոկրատիայի ճգնաժամը»[25]։

Կցանկանայինք բերել իր՝ Նասերի կարծիքն այս առթիվ՝ ամերիկյան «Քոլոմբիա բրոդքասթինգ սիսթեմ» ռադիոհաղորդումների ըն-

կերության թղթակից Ֆրենք Քիփբինդին տված հարցազրույցում։ Այն հարցին, թե ի՞նչ է ինքը մտածում դիկտատի մասին, պրեզիդենտը պատասխանեց. «Եթե մեր զգոնությունն ու ձգտումը՝ ժողովրդի ջանքերը մոբիլիզացնել և ուղղել ապագայի կառուցման համար նշանակում են դիկտատուրա, ապա ես, ամենայն հավանականությամբ, դիկտատոր եմ։ Կարելի է այսպիսի համեմատություն հիշել. հովիվը պահպանում է հոտը գայլերի հարձակումից և նրանց թույլ չի տալիս պատառոտել ոչխարներին։ Այդ հովիվը գայլերի աչքում արդյոք դիկտատոր չէ՞...։ Դա ասել է ձեր հռչակավոր առաջնորդ Աբրահամ Լինքոլնը։ Այնպես որ, իրերի նկատմամբ վերաբերմունքը կապված է տեսակետից»[26]։

Մենք հակված ենք կարծելու, որ դիկտատի տարը (և ոչ փոքր), անկասկած, տեղ գտել է, սակայն, պրեզիդենտի գաղափարախոսությունում տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ, որոնք արտահայտվել են նրա ցանկությունում՝ ժողովրդին տալ իրոք դեմոկրատական իրավունքներ։ Դեռ ավելին, կյանքի վերջին տարիներին պրեզիդենտը (նորից իր դասակարգային պատկանելիության շրջանակներում) հանգեց պետության կառավարման մեջ ժողովրդի մասնակցության անհրաժեշտության մտքին, հասկանալով, որ հեղափոխությունը զանգվածներն են կատարում, և ոչ թե մարդկանց մի փոքր խումբ, և կամ, մանավանդ, մեկ, թեկուզ և ականավոր, անձնավորություն։ Ինչպես նկատել է Նասերը «Հակասությունները, որոնց մենք բախվում ենք հետադիմական ու կապիտալիստական հասարակարգից սոցիալիստականին անցնելիս, պահանջում են ժողովրդական զանգվածների, աշխատավոր ժողովրդի հետ մերձեցում։ Եկել է ժամանակը, երբ մենք պետք է հենվենք ժողովրդի գիտակցականության և ոչ թե կառավարության միջամտության վրա»[27]։ Ժողովրդական զանգվածների նկատմամբ Նասերի վերաբերմունքի նման փոփոխումը ճշտորեն երևում է նրա իշխանության տարիներին ստեղծված քաղաքական կազմակերպությունները վերլուծելիս, երբ զանգվածների դերին բացասաբար վերաբերվելուց նա անցավ ոչ միայն քաղաքական կազմակերպության ստեղծման անհրաժեշտության գիտակցմանը, այլև որոշակի քայլեր կատարեց սոցիալիստական երանգի կուսակցության միջուկը ձևավորելու գործում։ Եթե սկզբում Նասերը համոզված էր, որ «կուսակցությունը միակ ճանապարհն է, որով գաղութարարությունը կարող է թափանցել երկիր»[28] և որ Եգիպտոսում քաղաքական կազմակերպությունների երևան գալու հետ մեկտեղ «մարդիկ մոռացան իրենց հիմնական նպա-

տակները և բոլոր ջանքերն ուղղեցին միջկուսակցական երկպառակությունների»[29], ապա նրա հայացքների էվոլյուցիան այդ հարցում ցույց է տալիս հետևյալ արտահայտությունը. «...քաղաքական կազմակերպության առկայությունը սոցիալիստական միության շրջանակներում վերջինիս կուժեղացնի»[30]։

Պրեզիդենտի հայացքների այսպիսի էվոլյուցիան վկայում է, որ լինելով սկզբում դիկտատորական վարչակարգ, Եգիպտոսը դանդաղ, բայց ճշտորեն գնում էր դեպի դեմոկրատիա։ Եվ մենք ոչ մի բարոյական իրավունք չունենք Եգիպտոսի պատմության այդ շրջանը միանշանակորեն դիկտատորական համարելու։

Г. В. НОВИКОВА

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ИДЕОЛОГИИ НАСЕРА

Резюме

В статье изложены некоторые компоненты философии президента Насера, связанные с постепенным осмысливанием внутренних процессов, имевших место в египетской действительности на протяжении двух десятилетий. Прослеживается постепенное отступление воззрений Насера от теории «надклассовости» египетского общества до приближения к научному пониманию социализма; рассматривается эволюция взглядов президента в отношении к народным массам; дается краткая характеристика «египетского социализма».

1 И. П. Беляев, Е. М. Примаков, Египет: время президента Насера, М., 1981, с. 266.

2 R. W. Baker, Egypt's uncertain revolution under Nasser and Sadat, London 1978, p. 34.

3 Մեջբերումն ըստ Nissim Rejwan, The Nasserist Ideology. Its exponents and critics, New York, Jerusalem, 1974, p. 70.

4 مجموعة خطب و تصريحات و بيانات الرئيس جمال عبدالناصر، القسم الاول، ص. ١٧٨

مجموعة خطب ...، القسم الثالث، ص. ٥٥

6 Նույն տեղում, էջ 566։

57 الميثاق، القاهرة، ١٩٦٢، ص. ٦٤.

8 J. Waterbury, The Egypt of Nasser and Sadat: the political economy of two regimes, New York, Princeton, 1983, p. 326.

9 الميثاق، ص ٥٢

10 Г. А. Насер, Проблемы египетской революции. Избранные речи и выступления 1952—1970 гг., М., 1979. с. 113.

11 Մեջբերման ըստ Беляев, Примаков, *նշված աշխ., էջ 274։*

12 مجموعة خطب و...، ص القسم الثالث، ص ٣٢٦

13 Նույն տեղում, էջ 564։

14 Նույն տեղում, էջ 565։

15 الاهرام، القاهرة، ١٩٦٤/١١/٢٤

17 جمال عبد الناصر، ثورتنا الاجتماعية، القاهرة، ١٩٥٩، ص ١٨٣—١٨٤

18 "الميثاق"، ص ٥٠، ٦٣—٦٤

19 О В. Ковтунович, Революция «Свободных офицеров» в Египте, М., 1984, с. 111.

20 P. J. Vatikiotis, Nasser and his generation, London, 1978, p. 198.

21 L. Binder, In a moment of enthuslasm: political power and the second stratum in Egypt, Chicago—London, 1978, p. 304.

22 G. A. Nasser, Philosophy of the Revolution, New York, 1955. p. 71.

23 Նասերի հանդիպումները ԱՍՄ անդամների հետ Գիզայում 7—8 մարտի 1966 թ., ԱՍՄ փակ բյուլետեն։

24 Մեջբերման ըստ Vatikiotis, *նշված աշխ., էջ 193—194։*

25 محمد حسنين تهيكل، السلام المستحيل و الديموقراطية الغائبة، بيروت، ١٩٨٠، ص ٢٣٥—٢٣٦

26 مجموعة خطب و...، القسم الثاني، ص ١٠١

27 "الاهرام"، القاهرة، ١٩٦٥—٥—٢٠

28 مجموعة خطب و...، القسم الاول، ص ٣١١

29 Նույն տեղում, էջ 214։

30 "الاهرام"، ١٩٦٥—٥—٢٠.